Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2024 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ, արձանագրություն №01-07/24:
Գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

Մ. Գ. Բարսեղյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԲԱԶԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման ընթացակարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման ընթացակարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի թիվ 1062-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. ապրիլի 4-ի «Քաղաքաշինության բնագավառում վերաորակավորման ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 478-Ն որոշման (այսուհետ՝ Վերաորակավորման ընթացակարգ) հիման վրա:
2. Սույն ընթացակարգի նպատակն է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով բազային մասնագիտական համապատասխան կրթական ծրագրով կրթություն ունեցող մասնագետների մասնագիտական վերաորակավորման կազմակերպումը և իրականացումը:
3. Սույն ընթացակարգով սահմանվում են քաղաքաշինության բնագավառում բազային մասնագիտական կրթություն ունեցող անձանց մասնագիտական վերաորակավորման կազմակերպման և իրականացման գործընթացները, վերաորակավորման կրթական ծրագրերում գրանցման և մասնակցության պայմանները, գիտելիքի ստուգման և գնահատման համակարգը:
4. Վերաորակավորման յուրաքանչյուր կրթական ծրագիր իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ տարեկան մեկ կամ երկու անգամ:
5. Ուսուցումն իրականացվում է առկա ձևով:
6. Վերաորակավորման կրթական ծրագրի յուրաքանչյուր խումբ ներառում է առնվազն հինգ մասնակից:
7. Եթե մասնակցության համար դիմել է մինչև հինգ դիմորդ, ուսումնական գործընթացի կազմակերպման հնարավորությունը և պայմանները քննարկվում են մասնակիցների հետ:
8. Ուսուցումն իրականացվում է վճարովի հիմունքներով:

9. Վերաորակավորման կրթական ծրագրերը իրականացվում են փուլերով: Յուրաքանչյուր փուլի արժեքը սահմանվում է առանձին՝ հիմք ընդունելով Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհրդի որոշմամբ հաստատված վերաորակավորման կրթական ծրագրերի յուրաքանչյուր փուլում ներառված դասընթացների ընդհանուր կրեդիտների քանակը և մեկ կրեդիտի արժեքը: Ծրագրի ընդհանուր արժեքը սահմանվում է որպես առանձին փուլերի արժեքների գումար:
10. Քաղաքաշինության բնագավառում բազային մասնագիտությամբ մասնագետների մասնագիտական վերաորակավորման գործընթացը կազմակերպում, իրականացնում և վերահսկում է Համալսարանի շարունակական կրթության և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման պատասխանատու ստորաբաժանումը (այսուհետ՝ Պատասխանատու ստորաբաժանում):

II. ՎԵՐԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11. Վերաորակավորման կրթական ծրագրերում ուսումնառելու նպատակով կարող են դիմել Վերաորակավորման ընթացակարգի 14-րդ կետով սահմանված բազային մասնագիտությամբ համապատասխան կրթական ծրագրով կրթություն ունեցող մասնագետները:
12. Վերաորակավորման կրթական ծրագրի մեկնարկի և մասնակցության համար անհրաժեշտ պայմանների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Համալսարանի պաշտոնական կայքում:
13. Վերաորակավորման կրթական ծրագրերին մասնակցության նպատակով դիմորդները նախապես գրանցվում են Համալսարանի առցանց հարթակում:
14. Նախնական գրանցման մասին տեղեկատվությունը ստանալուց հետո Պատասխանատու ստորաբաժանումը տեղեկացնում է դիմորդին՝ Համալսարան ներկայացնել անձը հաստատող փաստաթղթերի և բազային կրթության վկայագրերի (դիպլոմների) և բնօրինակները և պատճենները (արտերկրի բուհերում բարձրագույն կրթություն ստացած մասնագետների համար՝ փաստաթուղթ կրթության համարժեքության վերաբերյալ):
15. Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, եթե դիմորդի կողմից հայցվող վերաորակավորման կրթական ծրագիրը Վերաորակավորման ընթացակարգի 14-րդ կետի համաձայն համապատասխանում է բազային մասնագիտությանը և անցած կրթական ծրագրին, դիմորդի հետ կնքվում է պայմանագիր, դիմորդը վճարում է վերաորակավորման կրթական ծրագրի առաջին փուլի համար պայմանագրով սահմանված գումարը, որից հետո հրամանագրվում է որպես վերաորակավորման կրթական ծրագրի ունկնդիր:
16. Համալսարանի և ունկնդրի միջև կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է Վերաորակավորման կրթական ծրագրի տևողությունը, փուլերի քանակը, յուրաքանչյուր փուլի կրեդիտների չափը, յուրաքանչյուր փուլի արժեքը և ուսման վարձի չափը, որը ձևավորվում է փուլերի արժեքների հանրագումարով:
17. Ունկնդիրը ուսման վարձը վճարում է յուրաքանչյուր փուլի համար առանձին՝ փուլի մեկնարկից առնվազն 5 օր առաջ:

III. ՎԵՐԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

18. Համալսարանի համապատասխան ամբիոնները մշակում են Վերաորակավորման ընթացակարգից բխող վերաորակավորման կրթական ծրագրեր և ներկայացնում Պատասխանատու ստորաբաժանմանը:
19. Կրթական ծրագիրը ներառում է ուսումնական պլանը, վերջնարդյունքները և դասընթացների ծրագրերը:
20. Կրթական ծրագրերը հաստատվում են Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
21. Յուրաքանչյուր դասընթացից առաջ ունկնդրին տրամադրվում է դասընթացի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

IV. ՎԵՐԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

22. Ուսումնառությունն իրականացվում է վերաորակավորման կրթական ծրագրի հաստատված ուսումնական պլանի ժամանակացույցով:
23. Վերաորակավորման կրթական ծրագրում ունկնդրի ուսումնական բեռնվածությունը սահմանվում է առնվազն 45 ակադեմիական կրեդիտ (Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ):
24. Ունկնդիրը պարտավոր է դասընթացին ապահովել առնվազն 60% մասնակցություն:
25. Ունկնդրի գնահատումն իրականացվում է դասընթացի առանձին թեմաների յուրացման մակարդակի և առաջադրանքների ինքնուրույն կատարման ստուգման և/կամ նախագծային աշխատանքների միջոցով: Գնահատման չափանիշները նկարագրվում են դասընթացի ծրագրում:
26. Ունկնդիրը գնահատվում է յուրաքանչյուր դասընթացի ավարտին: Դասընթացի ամբողջ ծավալի յուրացման և պահանջվող հմտությունների ու կարողությունների տիրապետման մակարդակը ստուգվում և գնահատվում է «ստուգված» կամ «չստուգված» սանդղակի կիրառմամբ: Սույն կետով սահմանված պահանջները չբավարարելու դեպքում ունկնդիրը հնարավորություն է ստանում մեկ անգամ ևս անցնել գնահատում՝ նախապես իրեն տրամադրված ժամանակացույցին համապատասխան: Կրկին չհաջողելու դեպքում ունկնդրին հնարավորություն է տրվում լրացուցիչ վճարով անցնել վերահանձնում՝ վերաորակավորման կրթական ծրագրում ուսումնառությունը շարունակելու համար:
27. Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո ունկնդրին տրամադրվում է տեղեկանք անցած դասընթացների վերաբերյալ:
28. Առաջին փուլը հաջողությամբ չավարտելու դեպքում դադարեցվում է ուսումնառությունը երկրորդ փուլում շարունակելու իրավունքը:
29. Ունկնդիրը համարվում է վերաորակավորման կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտած, եթե բոլոր դասընթացները հաջողությամբ ավարտել է և ստացել է «ստուգված»:
30. Ունկնդիրը կարող է օգտվել լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, և այլ հնարավորություններից, մասնակցել ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը:
31. Արտակարգ և ֆորսմաժորային իրավիճակներում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն) կրթության շարունակականությունն ապահովելու նպատակով դասընթացները կարող են իրականացվել առցանց եղանակով:

32. Վերաորակավորման կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտած ունկնդրին տրվում է վկայական՝ Հավելվածի N 1 ձևին և վկայականի անբաժանելի մաս հանդիսացող ներդիր՝ N 2 ձևին համապատասխան:
33. Վկայականը և ներդիրը վավերացվում են Համալսարանի ռեկտորի ստորագրությամբ և կնիքով:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

34. Սույն ընթացակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
35. Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտում Համալսարանի գիտական խորհրդի որոշումը Համալսարանի ռեկտորի հաստատելուց հետո՝ հաջորդ օրը:
36. Այն հարցերը, որոնք ներկայացված չեն սույն ընթացակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով:

Գիտական քարտուղար Լ.Հ. Լևոնյան
10 հուլիսի 2024թ.
Գիտական խորհրդի արձանագրություն №01-07/24